

ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77²-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

Կարգադրում եմ՝

1. Մարզի համայնքներում 2012թ. վարչական վերահսկողություն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով
Ասատրյան Ի. - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի նախագահ
Սահակյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ
Հովհաննիսյան Դ. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Թաթարյան Յու. - մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ
Ստեփանյան Է.-մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ
Մնացականյան Վ.- մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ
2. հանձնաժողովին՝ վարչական վերահսկողություն իրականացնել կառուցվածքային ստորաբաժանումների համապատասխան մասնագետների միջոցով, ուսումնասիրության արդյունքները ներկայացնել մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ